ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՆՈՐ ՏԵՂԱԿԱԼ Է ՆՇԱՆԱԿՎԵԼ

16.10.2018 16:31

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանի հրամանով Հարութ Ակլունցը (արտոնագիր 2468) նշանակվել է Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի տեղակալ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2009թ. ավարտել է ԵՊՀ առընթեր ֆիզմաթ հատուկ դպրոց

2009-2013թթ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ իրավագետի մասնագիտությամբ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրա

«Փախստականների միջազգային պաշտպանություն» ամառային դպրոց Երևանի պետական համալսարան

«Միջազգային մարդասիրական իրավունք» ամառային դպրոց Հայաստանի ամերիկյան համալսարան

Առանձին խմբերի անձանց իրավունքների պաշտպանության առանձնահատկությունների վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ

2017թ. Փաստաբանական դպրոցի գարնանային հոսքի ունկնդիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁ

2013թ. հոկտեմբերից Երևանի Աջափնյակ և Դավթաշեն շրջանների ընդհանուր իրավասության դատարանում փորձաշրջան որպես դատավորի օգնական (քաղաքացիական ուղղվածությամբ)

2014թ հունվարից-2017թ. հուլիս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում զբաղեցրել է տարբեր պաշտոններ

2017թ. հուլիսից 2018թ. հոկտեմբեր ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում քրեական արդարադատության ոլորտում իրավունքների պաշտպանության վարչության պետի տեղակալ

Նախորդող աշխատանքային գործունեության

հիմնական գործառույթներն են եղել իրավաբանական խորհրդատվության տրամադրումը, առանձին իրավական խնդիրների վերաբերյալ ուսումնասիրություններ կատարելը, իրավական վերլուծությունների կատարումը, պետական մարմիններ, այդ թվում՝ փակ հաստատություններ այցերը, թե' գրավոր, թե' բանավոր հաղորդակցությունը պետական պաշտոնատար անձանց հետ, հավաքների ընթացքում մարդու իրավունքների պաշտպանվածության մոնիթորինգ, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին զեկույցների պատրաստման մասնակցությունը և այլն:

Պետական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան

Ծառայել է ՀՀ զինված ուժերում

Ամուսնացած է, երկու երեխա

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })